ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՃԱՌԸ

Ընկերնե՛ր. Հայաստանում սովետական կարգերի հաստատման 30-ամյակը մեր աշխատավորությունը դիմավորում է հսկայական հաջողություններով։ Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, Սովետական Հայաստանը դարձել է առաջավոր սոցիալիստական տնտեսության և կուլտուրայի երկիր։

Մեր աշխատավորության հետ միասին Սովետական Հայաստանի 30-ամյակը խոշոր նվաճումներով են դիմավորում նաև ռեսպուբլիկայի գիտության և կուլտուրայի, արվեստի և գրականության աշխատողները։ Ոգեշնչված Լենինի-Ստալինի ամենազոր գաղափարներով, հավատարմորեն կատարելով իրենց հայրենասիրական պարտքը, մեր գիտնականներն իրենց ամբողջ եռանդն ու կարողությունը գործադրում են սովետական առաջավոր գիտության զարգացման համար, արտադրության և գիտության աշխատողների համագործակցությունը ամրապնդելու համար, գիտությունը ժողովրդին ծառայեցնելու համար։

Մեր ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության և կուլտուրայի բոլոր նվաճումները ձեռք են բերվել բոլշևիկների պարտիայի և անձամբ մեր հայր և ուսուցիչ մեծ Ստալինի ջերմ հոգատարության շնորհիվ։ (Ծափահարություններ):

Կանգնեցնելով այս հաղթական մոնումենտը՝ ընկեր Ստալինի հոյակապ քանդակով, հայ ժողովուրդը իր երախտագիտության և անսահման նվիրվածության զգացմունքն է արտահայտում ժողովուրդների մեծ առաջնորդ, հայ ժողովրդի ազատարար և մեծ բարեկամ ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ։ (Ծափահարություններ):

Ընկեր Ստալինի հոյակապ մոնումենտ-քանդակի բացման այս հանդիսավոր պահին, մենք՝ մեր ռեսպուբլիկայի գիտության և կուլտուրայի աշխատողներս, խոստանում ենք, զինվելով Լենինի-Ստալինի ուսմունքով, լարել մեր բոլոր ուժերը, գործադրել մեր բոլոր ջանքերը՝ նորանոր հայտնագործություններով և աշխատություններով հարստացնելու սովետական գիտությունը, է՛լ ավելի ամրապնդելու գիտության և արտադրության աշխատողների համագործակցությունը, անձնվիրաբար աշխատելու կոմունիզմի վերջնական հաղթանակի համար։

Կեցցե՛ Լենինի-Ստալինի մեծ պարտիան՝ մեր հաղթանակների ոգեշնչողն ու կազմակերպիչը։

Կեցցե՛ մեր հայր և ուսուցիչ, գիտության մեծագույն կորիֆեյ, ժողովուրդների իմաստուն առաջնորդ մեծ ՍՏԱԼԻՆԸ։ (Ծափահարություններ):